



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

19 հունիսի 2020 թվականի թիվ 57-Ա  
ք. Երևան

#### «ԹԻՄ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՇՐԱԳՐԵՐԻ ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԻՄՈՒՍԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 4-ի «Հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 51-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով և հիմք ընդունելով «ԹԻՄ» ՍՊ ընկերության հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստանալու մասին 2020 թվականի մայիսի 13-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *որոշեց*.

1. Մերժել «ԹԻՄ» ՍՊ ընկերության դիմումը՝ հետևյալ պատճառաբանությամբ.

1) «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի և Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 4-ի «Հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 51-Ն որոշմամբ հաստատված կարգի երկրորդ գլխի 2-րդ մասի համաձայն պարտադիր ներկայացման ենթակա փաստաթղթերից չեն ներկայացվել դիմումատուի հիմնադիր փաստաթղթերի պատճենները և ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր:

2) Գործարար ծրագրում ներկայացված ֆինանսական կանխատեսումները կատարվել են առանց որևէ վերլուծությունների և հիմնավորումների, մինչդեռ ծրագրում օգտագործված բոլոր կանխատեսումներն ու ենթադրությունները պետք է հիմնավորված

լինեն գործունեության ընդլայնման, եկամտաբերության ավելացման հետ կապված կոնկրետ հաշվարկներով, վերլուծություններով և ելակետային տվյալներով:

3) Ֆինանսական հաշվարկներում ներառված են նաև ինտերնետ ծառայությունների մատուցման վերաբերյալ տվյալներ, ինչը հնարավորություն չի տալիս տարանջատել և գնահատել հեռուստառադիոձրագրերի հեռարձակման ծառայությունների մատուցմանն առնչվող տվյալները:

4) Գործարար ծրագրում բացակայում է մրցակցային շուկայի ուսումնասիրությունը, վերլուծությունը և ռիսկերի գնահատումը, ինչը արդյունավետ գործունեություն իրականացնելու կարևորագույն պայմանն է: Մրցակցային ոլորտի համակողմանի վերլուծությունը, մրցակիցների վերաբերյալ տեղեկատվության, մրցակցային առավելությունների և դրանով պայմանավորված մրցակցությանը դիմակայելու հետ կապված ռիսկերի գնահատումը անհրաժեշտ նախադրյալներ է ստեղծում նաև ոլորտում երկարատև գործունեություն ծավալող, նորարարական տեխնոլոգիաներով հագեցած, շուկայում լուրջ մրցակցություն ապահովող ընկերությունների առկայության պարագայում արդյունավետ գործունեություն իրականացնելու համար:

5) Պահանջվող փաստաթղթերի մի մասը ներկայացվել է ոչ հայերեն լեզվով, ինչը հակասում է «Լեզվի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածին:

6) Ընդհանուր առմամբ, ներկայացված գործարար ծրագիրը հնարավորություն չի տալիս հստակ և ամբողջական պատկերացում կազմել մատուցվելիք ծառայությունների և պլանավորված աշխատանքների, Ընկերության առջև դրված խնդիրների, դրանց հաղթահարման ուղիների, ինչպես նաև նպատակների և դրանց հասնելու միջոցների վերաբերյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԹԻՄ» ՍՊ ընկերությանը ծանուցելուց մեկ օր հետո:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ այն ստանալու օրվանը հաջորդող մեկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**